ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
Երկրաբանություն և աշխարհագրություն 55(2), 2021 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 338.46

ԷԹՆՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ *, Ս. Ս. ՔԵԼՅԱՆ **

ԵՊՀ սերվիսի ամբիոն, Հայաստան

Հոդվածում առաջարկված է էթնոզբոսաշրջության՝ որպես զբոսաշրջության առանձին տեսակի հիմնական տեսական հարցերի ամփոփ և համակարգված շրջանակ (սահմանում, նպատակներ, մասնակիցների մոտիվացիոն գործոններ, զարգացման ռեսուրսային բազա, տեղը զբոսաշրջության համակարգում, կայուն զարգացման հարցերը): Վերը նշված տեսական դրույթների հիման վրա ներկայացվում են ՀՀ-ում էթնոզբոսաշրջության զարգացման հնարավորությունները, հիմնական ուղղություններն ու հեռանկարային միտումները:

https://doi.org/10.46991/PYSU:C/2021.55.2.144

***Keywords*:** ethnotourism, ethnotourist resource, ethno village, RA.

Ներածություն: Արդի աշխարհում զբոսաշրջության զարգացման կարևոր միտումներից են ուշադրության ավելացումն էթնիկ տարբեր խմբերի ավանդույթների և սովորույթների, ապրելակերպի, կենցաղային ու մշակութային առանձնահատկությունների նկատմամբ, ինչպես նաև դրանց զբոսաշրջային օգտագործման ինտենսիվացումը: Արդյունքում ձևավորվեց և զարգանում է էթնոզբոսաշրջությունը՝ որպես զբոսաշրջության ինքնուրույն տեսակ, մշակութահենք զբոսաշրջության ուղղություններից մեկը: Այն զարգացման հարուստ նախադրյալներ և լայն հեռանկարներ ունի ՀՀ-ում՝ պայմանավորված հայ ժողովրդի և երկրում բնակվող էթնիկ այլ խմբերի հարուստ ու բազմազան պատմամշակութային ժառանգությամբ:

Տվյալ հոդվածում ի մի են բերվում էթնոզբոսաշրջության առկա մի շարք բնորոշումներ, առաջարկվում է էթնոզբոսաշրջության հիմնական տեսական հարցերի միասնական-ընդհանրացված և համակարգված շրջանակ: Վերը նշված տեսական հատվածի հիման վրա ներկայացվում են ՀՀ-ում էթնոզբոսաշրջության զարգացման առկա նախադրյալները, հիմնախնդիրներն ու հեռանկարային ուղղությունները:

* E-mail: tigran.sargsyan@ysu.am
** E-mail: s.qelyan@ysu.am

Հետազոտության մեթոդիկան և հիմնական արդյունքները:

Էթնոզբոսաշրջության տեսական հարցերի ընդհանրացված շրջանակը: Ինչպես զբոսաշրջության այլ տեսակների, այնպես էլ էթնոզբոսաշրջության պարագայում կարելի է առանձնացնել տեսական-հիմունքային հետևյալ հիմնական հարցերը.

ա) բնորոշումը, նպատակները;

բ) մասնակիցները, մոտիվացիոն գործոնները, ենթատեսակները;

գ) զարգացման ռեսուրսային հենքը և կազմակերպման մոտեցումները;

դ) տեղը զբոսաշրջության համակարգում և կապն այլ տեսակների հետ;

ե) կայուն զարգացման հնարավորությունները և հիմնախնդիրները:

ա) *Բնորոշումը, նպատակները*: Ներկայումս լայնորեն շրջանառվում են էթնոզբոսաշրջության մի շարք սահմանումներ: Այսպես, ըստ Մ. Բիրժակովի՝ էթնոզբոսաշրջությունը համարվում է մշակութային զբոսաշրջության ենթատեսակ՝ ուղղված ազգերի և ժողովուրդների ճանաչողությանը, մշակութային ու լեզվաբանական փոխանակությանը [1]: Չ. Սունդուևը և Լ. Խիշիկտուևան էթնոզբոսաշրջությունը բնորոշում են որպես մշակութաճանաչողական զբոսաշրջության ուղղություն, որը ենթադրում է զբոսաշրջիկների այցելությունները տեղացիների բնակության միջավայր, ծանոթացում տեղական, ազգային մշակույթին, ինչպես նաև այցելություն՝ պատմական հայրենիք կամ ծննդավայր [2]:

Ըստ Հարրոնի, Վայլերի և Հոլլի սահմանման, էթնոզբոսաշրջությունը ճանապարհորդություն է, որի նպատակն է լեզվական, մշակութային, կենցաղային, կրոնական և այլ տարբերություններ ունեցող՝ զբոսաշրջիկների և տեղաբնիկների միջև փոխհարաբերությունների ստեղծումը [3]: Այն նպատակ ունի բացահայտել մարդկանց կենցաղն ու կենսաոճը [4]: Առանցքային նշանակություն ունի ծանոթացումը «էկզոտիկ» ժողովուրդների հետ [5]:

Այսպիսով, էթնոզբոսաշրջությունը մշակութահենք զբոսաշրջության տեսակ է՝ հիմնված, մասնավորապես, էթնիկ տարբեր խմբերի մշակութային պայմանների ու առանձնահատկությունների կայուն օգտագործման վրա՝ որպես զբոսաշրջային գրավչության տարրեր: Հիմնական նպատակն է ազգային ավանական մշակույթի ու կենցաղի, բարքերի, նիստուկացի, խոհանոցի, ավանդույթների և սովորույթների ճանաչումը, բացահայտումը: Այս առումով առանցքային կարևորություն ունեն ազգային տարբեր տոնակատարությունները, ծեսերը, փառատոնները, ավանդական խաղաձևերը և այլն:

բ) *Մասնակիցները, մոտիվացիոն գործոնները, ենթատեսակները*: Կարելի է առանձնացնել էթնոզբոսաշրջային ուղևորությունների մասնակիցների՝ էթնոզբոսաշրջիկների հետևյալ հիմնական մոտիվացիոն գործոնները՝ նեղ մասնագիտական (ազգագրություն, պատմություն, մշակութաբանություն) հետաքրքրություններ, հոգևոր-ճանաչողական պահանջմունքների բավարարում, ոչ ստանդարտ ուղևորություն ձեռնարկելու ցանկություն, ժամանց և զվարճանք: Ըստ այդմ, էթնո բաղադրիչը կարող է հանդես գալ որպես ուղևորության առանցքային-միակ նպատակ, հիմնական նպատակ և հարակից-օժանդակ նպատակ՝ այլ ուղղվածության տուրերի կազմում:

Վերը նշվածից ակնհայտ է դառնում, որ էթնոզբոսաշրջիկների շրջանակը բավական լայն է՝ մասնագետ-ազգագրագետ զբոսաշրջիկներից մինչև, այսպես կոչված, «պատահական էթնոզբոսաշրջիկներ», էթնոզբոսաշրջիկներ՝ ըստ հանգամանքների և այլն:

գ) *Զարգացման ռեսուրսային հենքը և կազմակերպման մոտեցումները*: Զբոսաշրջության ցանկացած տեսակի զարգացումը հիմնված է ռեսուրսային որոշակի բազայի (զբոսաշրջային, ռեկրեացիոն ռեսուրսներ) օգտագործման վրա: Մասնավորապես, էթնոզբոսաշրջային ռեսուրսներ են համարվում էթնիկ խմբերի մշակութային ժառանգության ամենատարբեր տարրերը՝ ճարտարապետական կառույցներ, շինություններ, արհեստներ, խոհանոց, բանահյուսության, արվեստ, հավատալիքներ և այլն: Ըստ այդմ, կարելի է առանձնացնել նյութական-շոշափելի և ոչ նյութական բնույթի էթնոզբոսաշրջային ռեսուրսներ:

Էթնոզբոսաշրջության համալիր տարածական կազմակերպման առումով կարևոր նշանակություն ունեն այն բնակավայրերը (հիմնականում, գյուղական՝ էթնիկ գյուղեր կամ էթնոգյուղեր), որտեղ պահպանվել են ավանդական մշակույթի և կենսաձևի յուրահատկությունները: Զբոսաշրջային մեծ գրավչություն ունեն նաև ազգային ավանդական կենցաղի, գյուղական ապրելակերպի ու տնտեսվարման առանձնահատկությունները ներկայացնող թանգարանները:

Այս առումով լավ օրինակ է ԱՄՆ Մասսաչուսեթս նահանգում գտնվող «Plimoth Plantation» բացօթյա պատմա-ազգագրական թանգարանը՝ հիմնված Ատլանտյան օվկիանոսի ընդարձակ առափնյա անտառածածկ հատվածում: Այստեղ թատերականացված ներկայացումների ձևաչափով ներկայացվում են ինչպես տեղաբնիկ հնդկացիների, այնպես էլ 17-րդ դարի եվրոպացի վերաբնակիչների ավանդական կենցաղի ու տնտեսվարման ձևերը:

Էթնոզբոսաշրջային տեսանկյունից հետաքրքիր են նաև առանձին համայնքները, որոնք, պահպանվելով նախասկզբնական տեսքով, արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի կենսաոճն ու էթնոմշակութային առանձնահատկությունները: Օրինակ՝ Հյուսիսային Ամերիկայի, Հարավային Աֆրիկայի, Հարավարևելյան Ասիայի և Օվկիանիայի տեղաբնիկ էթնիկ խմբերի համայնքները:

Էթնոզբոսաշրջային ռեսուրսների օգտագործման ձևը մեծապես պայմանավորում է զբոսաշրջության այս տեսակի կազմակերպման առանձնահատկությունները: Այսպես, զբոսաշրջային ուղևորությունների կազմակերպման արդի միտումներից է մասնակցային կամ կոնտակտային մոտեցումը՝ զբոսաշրջիկը պասիվ դիտորդից վերածվում է ակտիվ և ներգրավված մասնակցի, ինչն ապահովում է առավել մնայուն և վառ տպավորությունների ստացումը: Էթնոզբոսաշրջության պարագայում այցելուները կարող են մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին, դառնալ ավանդական կենցաղի և առօրյայի մասնակիցը:

Թեպետ էթնոզբոսաշրջության ներքին ճյուղային կառուցվածքը դեռևս վերջնականորեն ձևավորված չէ, սակայն պայմանականորեն կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ենթատեսակները՝ ընդհանուր-ճանաչողական էթնոզբոսաշրջություն, նոստալգիկ էթնոզբոսաշրջություն, ջայլո-զբոսաշրջություն, առանձին էթնիկ խմբերի (մասնավորապես, պետության ազգային փոքրամասնությունների) զբոսաշրջություն, գաստրոնոմիական ուղղվածության էթնոզբոսաշրջություն:

դ) *Տեղը զբոսաշրջության համակարգում և կապն այլ տեսակների հետ*: Զբոսաշրջության տեսակներն, ըստ զարգացման ռեսուրսային գործոնների և առանձնահատկությունների, հիմնականում կարող են բաժանվել 2 խոշոր խմբի՝ բնահենք և մշակութահենք: Էթնոզբոսաշրջությունը մշակութահենք զբոսաշրջության տեսակ է, որը սերտորեն կապված է գյուղական, կրոնական, էկոլոգիական, ճանաչողական, ժամանցային և զբոսաշրջության այլ տեսակների հետ:

ե) *Կայուն զարգացման հնարավորությունները և հիմնախնդիրները:* Ինչպես հայտնի է, զբոսաշրջության կայուն զարգացման՝ կայուն զբոսաշրջության հիմնական չափանիշներն են էկոլոգիական անաղարտությունը, տնտեսական արդյունավետությունը, սոցիալական արդարությունն ու հավասարությունը և մշակութային բազմազանության պահպանությունը:

Էթնոզբոսաշրջությունը կարող է դիտվել որպես տնտեսվարման ավանդական ձևերի պահպանման և զարգացման արդյունավետ միջոց: Այն տեղի բնակիչներին հնարավորություն է տալիս բիզնես գործընթացների մասնակիցը դառնալ և եկամուտներ ստանալ սպասարկման միջոցով՝ արտադրելով և իրացնելով հուշանվերներ, ցուցադրելով ավանդական կենցաղի, բնօգտագործման ու տնտեսվարման ձևերը՝ դրանց մասնակից դարձնելով զբոսաշրջիկներին: Զուգահեռաբար, տեղի է ունենում է համապատասխան ենթակառուցվածքի և սպասարկման ցանցի ձևավորում ու զարգացում՝ բնակչության զբաղվածության և եկամուտների ոլորտում դրական ազդեցությամբ: Ակնհայտ է էթնոզբոսաշրջության առանցքային դերակատարությունը կայուն զբոսաշրջության մշակութային (մշակութային ժառանգության պահպանություն, միջմշակութային երկխոսության զարգացում, հանդուրժողականության ձևավորում) և էկոլոգիական (շրջակա միջավայրի և բնօգտագործման ավանդական ձևերի պահպանություն) ասպեկտների ապահովման գործում ևս:

Այսպիսով, առանց չափազանցության, էթնոզբոսաշրջության զարգացումը կարող է դիտվել որպես համայնքների կայուն զարգացման գործոն:

Ի նպաստ էթնոզբոսաշրջության կայուն զարգացման՝ տեղին է դեստինացիոն մոտեցման կիրառությունը: Ընդհանուր առմամբ, զբոսաշրջային դեստինացիան զբոսաշրջային ռեսուրսների, ենթակառուցվածքների, մարդկանց (զբոսաշրջիկներ, տեղական բնակչություն ու համայնքեր) փոխկապակցված ամբողջությունն է որոշակի տարածքի սահմաններում: Ըստ այդմ, առաջարկվում է առանձնացնել «էթնոզբոսաշրջային դեստինացիա» հասկացությունը՝ որպես էթնոզբոսաշրջության զարգացման տարածական ծրագրման հենք և համակարգային մոտեցման լավ օրինակ:

***Էթնոզբոսաշրջության զարգացման հնարավորություններն ու հեռանկարները ՀՀ-ում*:** Չնայած տարածքի փոքր չափերին ու բնակչության գրեթե միատարր ազգային կազմին (հայեր՝ շուրջ 98%), ՀՀ-ն աչքի է ընկնում էթնոզբոսաշրջային ռեսուրսների առատությամբ, ինչին նպաստում է հարուստ և բազմազան պատմամշակութային ժառանգությունը: Հատկանշական է նաև երկրի՝ միջտարածաշրջանային ու միջքաղաքակրթական խաչմերուկում գտնվելու հանգամանքը: ՀՀ-ն, որպես էթնոզբոսաշրջային դեստինացիա, կարող է գրավել զբոսաշրջիկների լայն շրջանակին՝ տարբեր մոտիվացիոն գործոններով, նախընտրություններով ու հետաքրքրություններով:

Քննարկենք էթնոզբոսաշրջության առանձին ենթատեսակների զարգացման հնարավորություններն ու հեռանկարները ՀՀ-ում:

Ընդհանուր-ճանաչողական էթնոզբոսաշրջություն: Այս ուղությունը, թերևս, էթնոզբոսաշրջության ամենահիմնական, ընդհանուր և համալիր ուղղությունն է՝ հիմնված, էթնոմշակութային պայմանների ու առանձնահատկությունների ճանաչման վրա: ՀՀ-ում զարգացման լայն հեռանկարներ ունի՝ շնորհիվ հարուստ պատմական ժառանգություն, արվեստի, բանահյուսության, ավանդույթների ու սովորույթների, ճարտարապետության: Առանձնակի հիշատակման կարիք

ունեն գյուղական բնակավայրերը, որտեղ պահպանվել են բնօգտագործման, կենցաղի ու տնտեսվարման ավանդական ձևերը, ազգային մշակույթի տարրերը (էթնոգյուղեր): Այստեղ զբոսաշրջիկներին կարող են առաջարկվել այցելություններ տեղացիների տներ, մասնակցություն երաժեշտական, պարային համարների, ազգային կերակրատեսակների համտես, ակտիվ մասնակցություն տոնակատարություններին, գյուղատնտեսական և կենցաղային աշխատանքներին և այլն: Կարևոր դերակատարություն կարող են ունենալ ազգագրական ու երկրագիտական թանգարանները, գաստրոնոմիական (առավել մանրամասն՝ հաջորդ ենթակետում) և ոչ գաստրոնոմիական բնույթի տոնակատարությունները («Ոչխարների խուզում»՝ Սյունիքում, «Լոռվա ձմեռ» և այլն):

Հատկանշական է, որ ՀՀ տարբեր մարզերում պատմականորեն ձևավորվել են տնտեսվարման ավանդական և գերակշռող ձևեր, որոնք, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, իրենց ազդեցությունն են թողնում տվյալ տարածաշրջանի էթնոմշակութային ու էթնոզբոսաշրջային պայմանների վրա: Օրինակ՝ ձկնորսությունը և ձկնամթերքի պատրաստումը (Սևանի ավազան), գինեգործությունը (Վայոց ձոր), այգեգործությունը և բանջարաբուծությունը, չորացրած մրգերի պատրաստումը (Արարատյան դաշտ), կաթմամթերքի պատրաստումը (Արագածոտնի, Շիրակի և այլ բարձր լեռնային հատվածներ), գորգագործությունը, ծխախոտագործությունը (Տավուշ) և այլն:

Գաստրոնոմիական ուղղվածության էթոզբոսաշրջություն: ՀՀ էթնոզբոսաշրջային հնարավորությունների կազմում կարևոր են հատկապես վերջին տարիներին (նախքան covid19 համավարակը) տարբեր մարզերում մեծ թափ ստացող՝ ավանդական գաստրոնոմիական տոնակատարությունների, փառատոնների անցկացումը: Դրանք խթանում են, առհասարակ, տվյալ տարածաշրջանի զբոսաշրջային գրավչության բարձրացումը և մշակութային ժառանգության հանրայնացումը: Օրինակ՝ գինու, խորովածի, տոլմայի, գաթայի փառատոնները, համապատասխանաբար, Արենիում, Ախթալայում, Սարդարապատում և Խաչիկում:

Ավանդաբար, զբոսաշրջիկների համար գրավիչ են նաև ավանդական լավաշ և գաթա թխելը, խնոցու օգտագործումը, չրեղենի և սուջուխի պատրաստումը և այլն:

Նոստալգիկ էթնոզբոսաշրջություն: Այս ուղղության զարգացման կարևոր նախապայմաններից է սփյուռքի առկայությունը, պատմական հայրենիքն ու արմատները ճանաչելու ցանկությունը: Աշխարհի շատ երկրներում առկա են հայկական գաղթօջախներ, իսկ ՀՀ այցելող զբոսաշրջիկների զգալի մասը հայեր են, որոնց հիմնական նպատակներն են՝ այցելել ծննդավայրեր կամ արյունակից հարազատներին, ճանաչել հայրենի բնօրրանը, նրա պատմությունը, մշակույթն ու տեսարժան վայրերը, բացահայտել սեփական արմատները, զարգացնել ազգային ինքնագիտակցությունը:

Ազգային փոքրամասնությունների էթնոզբոսաշրջություն: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ բնակչության ազգային կազմում միայն 2%-ն են կազմում այլ՝ ոչ հայ էթնիկ խմբերի ներկայացուցիչները (եզդիներ, ռուսներ, ասորիներ, հրեաներ, հույներ, վրացիներ և այլն), սակայն վերջիններս առանձնանում են յուրատիպ, բազմազան և զբոսաշրջային առումով գրավիչ կրոնական, մշակութային և կենցաղային առանձնահատկություններով: Մասնավորապես, եզդիների հարսանեկան ավանդույթները և ազգային կրոնը՝

Շարֆադինը, էթնիկ ռուս մոլոկանների մշակույթը, ավանդական կենցաղն ու տնտեսական գործունեությունը (գլխավորապես՝ Լոռու մարզի Լերմոնտովո և Ֆիոլետովո համայնքներում) և այլն:

Ջայլո-զբոսաշրջություն: Էթնոզբոսաշրջության այս ուղության զարգացումը պայմանավորված է բարձր լեռնային ալպյան մարգագետինների և արոտավայրերի առկայությամբ: Այստեղ զբոսաշրջիկները կարող են որոշ ժամանակ հանգրվանել անասնապահների վրաններում՝ ծանոթանալով նրանց կենցաղին ու տնտեսական գործունեությանը, հնարավորության դեպքում՝ մասնակցելով վերջինիս (կաթնամթերքի պատրաստում, դեղաբույսերի, ուտելի խոտաբույսերի, սնկի, հատապտուղների, ծաղիկների հավաք և այլն):

ՀՀ-ում էթնոզբոսաշրջության կայուն զարգացման ապահովման առումով կարևորվում են համալիր էթնոզբոսաշրջային դեստինացիաների նախագծումն ու ստեղծումը՝ համատեղելով տարբեր ռեսուրսները մեկ վայրում, ձևավորելով համապատասխան ենթակառուցվածքային և սերվիսային համակարգ, թանգարանային ցուցադրության հնարավորություններ: Դա թույլ կտա ապահովել նաև տեղի բնակիչների արդյունավետ ներգրավվածությունն ու մասնակցությունը: Արդյունքում, զբոսաշրջային եկամուտները կուղղվեն գյուղական համայնքների զարգացմանը, զբաղվածության ապահովմանը և տեղի ավանդական մշակութային ժառանգության պահպանմանը, ռացիոնալ բնօգտագործման և կայուն զարգացման վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացմանը:

Այս առումով արդյունավետ մոտեցում է «էթնոգյուղ» հայեցակարգի մշակումն ու կյանքի կոչումը: Արդեն իսկ համապատասխան նախաձեռնություններ են իրականացվում Ենոքավան (Տավուշի մարզ, Իջևանի տարածաշրջան) և Եղիպատրուշ (Արագածոտնի մարզ, Ապարանի տարածաշրջան) գյուղերում [6]:

Եզրակացություն: Էթնոզբոսաշրջության զարգացումն ամբողջությամբ համահունչ է գլոբալացմանը զուգահեռ ընթացող՝ լոկալացման գործընացների տրամաբանությանը, ինչի արդյունքում ավելանում է ուշադրությունը տեղական առանձնահատկությունների ու գործոնների նկատմամբ (այդ թվում՝ պատմամշակութային և ազգագրական): Էթնոզբոսաշրջությունը կարևոր և ուրույն տեղ ունի ազգապահպանության, էթնիկ ինքնագիտակցության բարձրացման գործում, նպաստում է մշակութային փոխանակմանը, ճանաչողությանն ու երկխոսությանը, հանդուրժողականության ձևավորմանը: Զգալի է նաև դրա դերակատարությունն առանձին համայնքների ու տարածքային միավորների կայուն զարգացման համատեքստում՝ զբաղվածության և եկամուտների ապահովման, ենթակառուցվածքների ձևավորման ու զարգացման, կյանքի որակի բարձրացման և ռացիոնալ բնօգտագործման ապահովման առումներով:

ՀՀ-ում առկա են էթնոզբոսաշրջության զարգացման լայն և բազմազան հնարավորություններ՝ այցելուների ընդարձակ շրջանակի ներգրավմամբ: Այդուհանդերձ, անհրաժեշտ է մշակել երկրում էթնոզբոսաշրջության զարգացման միասնական ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագրեր՝ հիմնված հստակ գիտատեսական վերլուծությունների և կանխատեսումների վրա: Արդյունավետ կարող են լինել զբոսաշրջության համաչափ տարածքային (մարզային ու համայնքային) զարգացման ծրագրերում էթնոզբոսաշրջային բաղադրիչի ներառումը, անջատ կերպով իրականացվող

գործողությունների միասնական համակարգումը և համալիր էթնոզբոսաշրջային դեստինացիաների ու էթնոգյուղերի նախագծումը:

Ստացվել է՝ 26.05.2021
Գրախոսվել է՝ 29.06.2021
Հաստատվել է՝ 07.07.2021

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Биржаков М.Б. *Введение в туризм.* Издательский дом «Герда» (2007), 576 с.
2. Сундуев Ч.Б., Хышиктуева Л.В. Этнотуризм как одно из направлений культурно-познавательного туризма. *Вестник Бурятского государственного университета* **4** (2009), 53–56.
3. Harron S., Weiler B., Hall C.M. *Ethnic Tourism. Special Interest Tourism* (1992), 83–94. Հասանելի է 18.05.2021.
www.cabdirect.org
4. Bolnick S. *Promoting the Culture Sector Through Job Creation and Small Enterprise Development in SADC Countries: The Ethno-Tourism Industry*. ILO (2003): Available 20.05.2021
www.ilo.org
5. Petroman I., Petroman C., et al. A Religious and Ethnic Tourism Profile of Europe. *Scientific Papers Animal Science and Biotechnologies* **44** : 2 (2011), 490–493.
6. Էթնոգյուղ ստեղծողները. Եղիպատրուշ: Հասանելի է 22.05.2021.
https://journalist.am/archives/12857

Т. А. САРГСЯН, С. С. КЕЛЯН

СУЩНОСТЬ ЭТНОТУРИЗМА, УСЛОВИЯ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Резюме

В статье предлагается краткая систематизированная теоретическая база этнотуризма как отдельного вида туризма (определение, цели, мотивационные факторы участников, ресурсная база развития, место в туристической системе, вопросы устойчивого развития). На основе вышеупомянутых теоретических положений представлены возможности, основные направления и перспективные тенденции развития этнотуризма в Республике Армения.

T. A. SARGSYAN, S. S. QELYAN

THE ESSENCE OF ETHNOTOURISM, DEVELOPMENT PRECONDITIONS AND PROSPECTS IN REPUBLIC OF ARMENIA

Summary

The article proposes a concise and systematic theoretical framework of ethnotourism as a separate type of tourism (definition, goals, motivational factors of the participants, development resource base, place in the tourism system, issues of sustainable development). Based on the above-mentioned theoretical provisions, the opportunities, main directions and perspective tendencies for the development of ethno-tourism in the Republic of Armenia are presented.